

179, բառն *Lépre*), Եզրպտացի պատմագիր և քուրմ Մանեքոն՝ իր պատմութեան մէջ կը յիշատակէ եզրպտական վէպ մը, որուն համաձայն, իրր թէ Եբրայեցիք Եզրպտոսի մէջ բորոտութեամբ վարակուած ըլլալով՝ վտարուած են Նեղոսի ափերէն. նոյն մըտքով զրած են Յուստինոս և Տակիտոս, որոնց գէմ, սակայն Յովսեպոս Հրեայ պատմագիրը իր մէկ գործին մէջ կը հերքէ զանոնք, յարելով թէ Եբրայեցիք չէին որ Եզրպտոս մտած ժամանակ հետերնին տարին նոյն տիտը, այլ անոնք վարակուեցան տեղացիներէն. Եբրայեցւոց նման Փիւնիկեցիներն ալ ունեցան նոյն հիւանդութեան վարակումները, իրենց առևտրական յարաբերութեանց հետեանքով: Լատին բանաստեղծ մը, Լուկրետիոս, իր *Ջրնութեան իրաց քերթուածին* մէջ, կը հասկցնէ թէ ուրկութիւնը Նեղոս գետին ազդեցութեամբ յառաջ կու գար, ուստի կը յարեն գիտնականք թէ՛ բորոտութեան ծագումը պէտք է փնտռել Եզրպտոսի մէջ: Այս պատճառներուն համաձայն, ուրկութիւնը տեական դարձած է Իսրայէլացւոց պատմութեան ամբողջ ընթացքին մէջ: Հրէից սփիւռքը, Ասիոյ մէջ, Յունաց և Հռոմայեցւոց պատերազմները, ինչպէս նաև Արաբներուն յաղթանակը և Խաչակիրք բորոտութիւնը ծաւալեցին Արեւմտեան երկիրներու մէջ:

Շնորհիւ գիտութեան հայթայթած միջոցներուն և վարակեալներուն խիստ առանձնացումներուն, նոյն ախտին սաստկութեան առջևն առնուեցաւ:

Շատ կանուխէն, Երուսաղէմի հայ վանօրայք, ուզած են Ս. Քաղաքին մէջ ծաւալած ուրկութեան աւերները դարմանել, մըղ-ուելով թէ՛ մարդասիրական և թէ՛ բարեպաշտական տեսակէտներէ: Քրիստոնէական սկզբնական շրջանին, նոյն տիտէն վարակուածները փողոցներուն մէջ կը մնային անխնամ և անտիրական, քաղաքէն դուրս, դաշտերու և ձորերու մէջ, մարդկային ընկերութենէ վտարուած, յուսահատական նոպաներու տակ կը մահանային: Ժողովրդէն վարակուածներէն զատ, կը գտնուէին վանօրէից մէջ նոյն կարգի հիւանդ վանականներ՝ որ կը մնային անդարման և անխնամ: Ուստի հայ վանականութիւնը, նոյն իսկ Զ. կամ Է. դարուն, նկատի առաւ անհրաժեշտ պէտքը վանքի մը՝ որ ունենայ իրեն յատուկ ուրկանոցը: Այս պարագան յայտնապէս հասկնալի է Անաստաս վրդ.ի վանօրէից Յուցակէն,